Գործ թիվ ԵԴ/24244/02/18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ
ԳՈՐԾԸ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.02.2019թ. ք. Երևան

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ.Վարդազարյանս, ուսումնասիրելով վարույթում գտնվող թիվ ԵԴ/24244/02/18 քաղաքացիական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 12.11.2018թ. որոշմամբ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի հայցադիմումն ընդդեմ Արթուր Սուրենի Ազատյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ, որի վերաբերյալ որոշումը և համապատասխան փաստաթղթերն ուղարկվել են սույն գործով կողմերին:

Դատարանն արձանագրում է, որ ներկայացվել է նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող գումարի բռնագանձման պահանջ:

17.01.2019թ. պատասխանողը ստացել է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումը, սակայն հայցադիմումի պատասխան չի ներկայացրել: Հայցադիմումի պատասխան ուղարկելու համար սահմանված ժամկետն ավարտվել է 01.02.2019թ.:

Դատարանը գտնում է, որ բացակայում է գործը պարզեցված վարույթի կարգով չքննելու հիմքերը, հետևաբար պետք է գործը քննել պարզեցված վարույթի կարգով և նշանակել դատական ակտի հրապարակման ժամանակ և վայր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200-րդ, 296-298-րդ և 361-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ ԵԴ/24244/02/18 քաղաքացիական գործն ըստ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի հայցի ընդդեմ Արթուր Սուրենի Ազատյանի ՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, քննել պարզեցված վարույթի կարգով:
2. Դատական ակտը հրապարակել 2019թ. մարտի 22-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ռ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ